Արձանագրություն 13

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.10.2019թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Եփրեմյան - Անվտանգության ապահովման բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Խաչատրյան - Տնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Արեգ Գևորգյան - Անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/ԳԱ)

Հայկ Գրիգորյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային գլխավոր ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Կարեն Բարիկյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Օրակարգ

Հայտերի գնահատման նիստի մասին

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գարդիան» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել «Գարդիան» ՍՊ ընկերության և «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊ ընկերության միջև 28.06.2018թ. կնքված պայմանագիրն ամբողջ ծավալով, որակով և սահմանված ժամկետում կատարված լինելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կատարումն ընդունող կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը կամ հանձնման ընդունման արձանագրությունները՝ այդ իսկ պատճառով այդ պայմանագիրը չի կարող ընդունվել որպես նմանատիպ: Մասնակցի կողմից ներկայացվել են չորս այլ պայմանագրեր, որոնց ընդհանուր գումարը բավարարում է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված պահանջներին՝ միայն 3-րդ չափաբաժնի մասով, ուստի գնահատող հանձնաժողովը «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն ***որոշեց.***

1.1 «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվում «Գարդիան» ՍՊԸ-ն, որին սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

1.2 «Գարդիան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

1.3 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պանտեռա Սեքյուրիթի» ՍՊԸ-ին:

1.4 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել և «Պանտեռա Սեքյուրիթի» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր) և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

1.5 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն արձանագրության 1.4 կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան սույն թվականի հոկտեմբերի 18-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Եփրեմյան

Հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Խաչատրյան

Արեգ Գևորգյան

Հայկ Գրիգորյան

Կարեն Բարիկյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան